ՀՏԴ 373.3

Հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործընթացում

Վահան Մելիքսեթյան

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-240

Հանգուցային բառեր. *հաղորդակցում, հաղորդակցման խոչընդոտ, կրտսեր դպրոցական տարիք, ճգնաժամ, անձի ձևավորում, հաղորդակցական ունակություններ, հաղորդակցական խոչընդոտներ, սոցիալականացում*

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Կրտսեր դպրոցականների հաղորդակցման հիմնախնդիրը կարևոր է, քանի որ հաղորդակցման հմտությունների և կարողությունների ձևավորման աստիճանը ազդում է ոչ միայն երեխաների կրթության արդյունավետության, այլև նրանց սոցիալականացման և անձի ամբողջական զարգացման վրա:

Հաղորդակցումը առաջին հերթին շփումն է, զրույցի մասնակիցների համար նշանակալի տեղեկատվության փոխանակումը: Կրտսեր դպրոցականների հաղորդակցման խնդիրը բավականին արդիական է, քանի որ այն երեխայի, մասնավորապես աշակերտի կյանքի կարևոր մասն է: Դառնալով դպրոցական՝ փոխվում է նրանց վերաբերմունքը շրջապատող աշխարհի, մեծահասակների և հասակակիցների նկատմամբ: Եվ հենց այս շրջանում են ձևավորվում հաղորդակցման արդյունավետ հմտությունները շրջապատող մարդկանց հետ հարաբերություններ հաստատելու համար: Այն նաև ենթադրում է ինքն իրեն կազմակերպելու, ինչպես անձնական, այնպես էլ խմբային գործունեությունը կազմակերպելու կարողություն: Հենց այս տարիքում են յուրացվում հաղորդակցման կանոններն ու չափանիշները, որոնց նա կհետևի միշտ և ամենուր՝ անկախ հանգամանքներից:

Ուսումնասիրության *նորույթը* և *նշանակությունը* այն է, որ տվյալ ուղղությամբ մասնագիտական հետազոտություններ թե՛ ռուսական, թե՛ հայկական հոգեբանության գրականության մեջ շատ քիչ են. այն իր ուսումնասիրման շրջանակում ընդգրկում է ինչպես կրտսեր դպրոցականների մոտ հաղորդակցման առանձնահատկությունների ընդհանուր ուսումնասիրությունները, այլնպես էլ դրա զարգացմանն ուղղված գործնական դասընթացների կազմակերպումը, ինչպես նաև կրտսեր դպրոցականների հետ անմիջապես աշխատող մասնագետներին հոգեբանական մասնագիտական առաջարկությունների և խորհուրդների տրամադրումը, որոնք ուղղված են երեխաների մոտ հաղորդակցական հմտությունների զարգացմանը: Աշխատանքի *նպատակն* է ուսումնասիրել կրտսեր դպրոցականների հաղորդակցման հմտությունների առանձնահատկությունները ուսումնական գործունեության սկզբնական ժամանակահատվածում և զարգացնել դրանք: Աշխատանքի *օբյեկտ* ընդունել ենք կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատկությունները՝ որպես անձի զարգացման փուլ:

Ուսումնասիրության *խնդիրներն* են՝

ա. կատարել հաղորդակցման, դրա տեսակների, ինչպես նաև գործառույթների վերաբերյալ հոգեբանական գրականության համալիր վերլուծություն,

բ. հետազոտել և տեսականորեն վերլուծել կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանական և հաղորդակցման առանձնահատկությունները ուսումնական գործունեության ընթացքում, երեխա-երեխա և երեխա-մեծահասակ հարաբերությունների համակարգում,

գ. բացահայտել կրտսեր դպրոցականների մոտ հաղորդակցման հմտությունների

առանձնահատկությունները և զարգացվածության աստիճանը ուսումնական գործունեության սկզբնական շրջանում,

Այս խնդիրների լուծման նպատակով ընտրվել են ժամանակակից հոգեբանության մեջ գոյություն ունեցող *մեթոդներից* մի քանիսը և դրանց օգնությամբ պարզաբանվել վերոհիշյալ խնդիրների լուծումները, իսկ հոգեբանաշտկողական աշխատանքի համար մշակվել է խաղային թրեյնինգի ծրագիր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխայի համար խաղը շարունակվում է մնալ գործունեության առաջատար ձևերից մեկը:

Տեսական վերլուծության են ենթարկվել հաղորդակցման վերաբերյալ մասնագիտական գրականությունը, դրա տեսակները, գործառույթները, կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունները, տարբեր հարաբերությունների համակարգում հաղորդակցման առանձնահատկությունները:

Աշխատանքի *մեթոդաբանական* հիմք են դարձել հոգեբանության մեջ այնպիսի գիտնականների աշխատությունները, ինչպիսիք են Լ. Ս. Վիգոտսկին, Ա. Վ. Զապորոժեցը, Ա. Ն. Լեոնտևը, Ս. Լ. Ռուբինշտեյնը, ովքեր անդրադարձել են երեխայի հոգեբանական զարգացման առանձնահատկություններին: Հաղորդակցման վերաբերյալ աշխատանքներից կարող ենք նշել Ա. Ա. Բոդալյովի, Մ. Ի. Լիսինայի, Բ. Ֆ. Լոմովի, Դ. Բ. Էլկոնինի, Վ. Վ. Դավիդովի, Ժ. Պիաժեի, Գ. Ա. Յուկերմանի և այլոց աշխատությունները:

Կրտսեր դպրոցական տարիք

Կրտսեր դպրոցական տարիքը դպրոցականի մանկության առանցքային օղակն է, այն հիմնաքարը, որի վրա հետագայում կառուցվում են նրա հետագա կրթությունն ու դաստիարակությունը: Այն դպրոց է դպրոցի մեջ՝ հոգեբանական վերակառուցման, սեփական անձի նկատմամբ նոր վերաբերմունքի, սեփական գործողությունների նորովի գնահատման, առարկաների, երևույթների նոր հատկանիշների, կապերի ու հարաբերությունների բացահայտման, շրջապատող աշխարհի բովանդակության նորովի ընկալման դպրոց: Ըստ Դ. Բ. Էլկոնինի առաջադրած անձի հոգեկան գործընթացների զարգացման տարիքային պարբերացման՝ կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է 6-7-ից մինչև 10-11 տարեկանները: Կրտսեր դպրոցական տարիքը համապատասխանում է երեխայի ուսուցմանը տարրական դասարաններում (1-4-րդ դասարաններ): Այս տարիքում երեխայի համար առաջատար է դառնում ուսումնական գործունեությունը, որը նրան նոր ռեժիմ է պարտադրում, ներկայացնում նոր պահանջներ, ներքաշում սոցիալական նոր խմբի մեջ, ընդլայնում է նրա հաղորդակցման շրջանակը, նպաստում ինտելեկտուալ հմտությունների զարգացմանը, հաղորդակից դարձնում մարդկության դարավոր նվաճումներին, նախորդ սերունդների կուտակած փորձին [12] ու գիտելիքներին [13; 14]: Ուսումնական գործունեությանը զուգընթաց՝ երեխայի մոտ երևան են գալիս հոգեկան նոր որակներ, որոնք բացակայում են նախադպրոցականների մոտ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի հոգեբանական հիմնական դրույթներն են՝

1. գործողությունների կամածինությունը,
2. դրանց ներքին բնույթը, այսինքն՝ մտավոր պլանի առկայությունը,
3. ռեֆլեքսիան:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխան ապրում է ժամանակավոր անցումային շրջան, որը երբեմն ունենում է սուր ճգնաժամի ձև՝ երեխայի կյանքի բեկումնային պահ 7 տարեկանի ճգնաժամ: Երեխայի մոտ այս տարիքում դիտվում է մանկական անմիջականության կորուստ, որի գլխավոր պատճառը ներքին և արտաքին կյանքի ոչ բավականաչափ տարբերակվածությունն է. երեխան դառնում է ավելի քիչ հասկանալի և կանխատեսելի:

***Հաղորդակցում* և *հաղորդակցական խոչընդոտ* հասկացությունները**

Հաղորդակցումը մարդկանց միջև շփումների զարգացման բազմակողմ գործընթաց է, որը ծագում է համատեղ գործունեության պահանջմունքից:

Հաղորդակցումը ներառում է համատեղ գործունեության մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակումը, որը կարելի է բնութագրել որպես շփման հաղորդակցական կողմ: Հաղորդակցվելով՝ մարդիկ դիմում են լեզվին՝ հաղորդակցության կարևորագույն միջոցներից մեկին [1]: Հաղորդակցման երկրորդ կողմը հաղորդակցվողների փոխազդեցությունն է, խոսքի ընթացքում ոչ միայն բառերի, այլև գործողությունների, արարքների փոխանակումը, այսինքն՝ անհատների միջև փոխազդեցության կազմակերպումը [11, 209]:

Հաղորդակցման երրորդ կողմը ներառում է միմյանց հետ հաղորդակցվողների փոխըմբռնումը, փոխընկալման գործընթացը և փոխհասկացման ձևավորումը [3, 432]: Այսպիսով, հաղորդակցումը բարդ գործընթաց է, որում պայմանականորեն կարելի է առանձնացնել երեք կողմեր՝ *հաղորդակցական, ինտերակտիվ և ընկալողական* [17, 209]:

Հաղորդակցություն տերմինը (լատիներենից թարգմանաբար՝ *communico* բառից) նշանակում է *փոխանակում, հաղորդակցություն, շփում*: Ըստ Կուլիի սահմանման՝ հաղորդակցությունը մեխանիզմ է, որով ապահովվում է մարդկային հարաբերությունների գոյությունն ու զարգացումը՝ ներառյալ բոլոր մտավոր սիմվոլները, տարածության մեջ դրանց փոխանցման և ժամանակի մեջ պահպանման միջոցները:

Հաղորդակցում (և զանգվածային հաղորդակցություն) հասկացությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտցրեց ամերիկացի սոցիոլոգ Չարլզ Օրտա Կուլին (1864-1929) անցյալ դարի 1920-ական թվականներին «Սոցիալական գործընթաց» աշխատությունում, որից հետո սկսվեց սոցիալական հաղորդակցության կամ մարդկային հաղորդակցության տարբեր մակարդակների, ձևերի և տեսակների էությունը, բնութագրերը հասկանալու հայեցակարգային մոտեցումների մշակման ինտենսիվ գործընթացը: Քուլին հաղորդակցությունը սահմանեց որպես մեխանիզմ, որով գոյություն ունեն և զարգանում են մարդկային հարաբերությունները, և այս մեխանիզմը ներառում է բոլոր մտավոր սիմվոլները և տարածության մեջ դրանց փոխանցման միջոցները, ինչպես նաև հաստատակամությունը ժամանակի մեջ [5, 41]:

Հաղորդակցման գործընթացի կառուցվածքային տարրեր են՝

ա. հաղորդակցության սուբյեկտները,

բ. հաղորդակցման միջոցները,

գ. հաղորդակցվողների պահանջմունքները, շարժառիթները և նպատակները,

դ. հաղորդակցման ընթացքում փոխներգործության ու փոխազդեցության, ընկալման ու փոխըմբռնման մեխանիզմները [1, 235], հաղորդակցման արդյունքները [5, 142]:

Հաղորդակցական խոչընդոտը հոգեբանական խոչընդոտ է հաղորդակցման գործընկերների միջև տեղեկատվության փոխանցման ժամանակ: Սրանք հիմնականում սոցիալական կամ հոգեբանական բնույթ են կրում, որոնք կարող են ծագել, երբ բացակայում է շփման իրավիճակի հասկացումը տարբեր լեզուների պատճառով, ինչպես նաև ավելի խորը պատճառներով, որոնք գոյություն ունեն զրուցակիցների միջև: Սրանք կարող են լինել սոցիալական, քաղաքական, կրոնական, մասնագիտական տարբերություններ, որոնք ոչ միայն տարբեր կերպ են բացատրում այս կամ այն հասկացությունները, այլև ունեն տարբեր աշխարհընկալումներ, աշխարհայացքներ [16, 76-87]:

Մյուս կողմից՝ հաղորդակցման մեջ արգելքները կարող են կրել խորը հոգեբանական բնույթ: Դրանք կարող են ծագել կա՛մ շփվողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների հետևանքով, օրինակ՝ ծայրահեղ ամաչկոտությունը, ներփակվածությունը, կա՛մ նրանց միջև ձևավորված հատուկ հոգեբանական հարաբերությունների պատ-

ճառով, օրինակ՝ անվստահություն միմյանց հանդեպ: Այստեղ արդեն դրսևորվում է հաղորդակցման և հարաբերությունների միջև կապը: Հաղորդակցման գործընթացի հաջորդ կարևոր բաղկացուցիչը *հակադարձ կապի* առկայությունն է, որի բացակայությունը միջանձնային շփումներում կարող է համարվել հաղորդակցման արդյունավետության վրա ազդող գործոն:

Հաղորդակցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում

Դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից երեխան ներգրավվում է համադասարանցիների և ուսուցիչների հետ միջանձնային փոխազդեցությունների գործընթացում: Կրտսեր դպրոցական տարիքում այդ փոխազդեցությունը որոշակի դինամիկա և զարգացման օրինաչափություն ունի:

Հասակակիցների հետ հարաբերությունները

Դպրոցին հարմարվելու ժամանակահատվածում դասընկերների հետ շփումը, որպես կանոն, առաջին դասարանցիների համար հետին պլան է մղվում դպրոցական նոր տպավորությունների ազդեցության տակ [9, 175]: Երեխաները միմյանց հետ շփվում են ուսուցչի միջոցով [16, 76-87]: Կրտսեր դպրոցականը սկսում է ակտիվորեն տիրապետել հաղորդակցման հմտություններին: Այս ընթացքում տեղի է ունենում ընկերական կապերի ինտենսիվ հաստատում: Հասակակիցների խմբի հետ սոցիալական փոխազդեցության հմտությունների ձեռքբերումը և ընկերներ ձեռք բերելու կարողությունը այս տարիքային փուլում զարգացման կարևոր խնդիրներից են: Եթե երեխան մինչև 9-10 տարեկանը ընկերական հարաբերություններ է հաստատում իր դասընկերներից մեկի հետ, սա նշանակում է, որ նա կարողանում է սերտ սոցիալական կապ հաստատել հասակակցի հետ, երկար ժամանակ պահպանել հարաբերությունները, նշանակում է նաև, որ նրա հետ շփումը նույնպես կարևոր և հետաքրքիր է ինչ-որ մեկի համար [6, 73-77]:

6-7 տարեկան երեխաների համար ընկերներն առաջին հերթին նրանք են, ում հետ նա խաղում է, ում նա ավելի հաճախ է տեսնում, քան մյուսներին: Ընկերոջ ընտրությունը պայմանավորված է առաջին հերթին արտաքին պատճառներով՝ երեխաները նստում են նույն գրասեղանի մոտ, ապրում են նույն բակում: Այս տարիքում երեխաներն ավելի շատ ուշադրություն են դարձնում վարքագծին, քան բնավորության գծերին: Ընկերությունները փխրուն են և կարճատև, դրանք հեշտությամբ առաջանում են և կարող են բավականին արագ խզվել: 8-ից 11 տարեկան երեխաները ընկերներ են համարում նրանց, ովքեր օգնում են իրենց, պատասխանում իրենց խնդրանքներին և կիսում իրենց հետաքրքրությունները:

Փոխադարձ համակրանքի և բարեկամության առաջացման համար կարևոր են դառնում անձի այնպիսի գծեր, ինչպիսիք են բարությունը և ուշադրությունը, անկախությունը, ինքնավստահությունը և ազնվությունը: Երբ երեխան սկսում է աստիճանաբար տիրապետել դպրոցական իրականությանը, նրա մոտ ձևավորում է դասարանում անձնական հարաբերությունների համակարգը:

Մեծահասակների հետ հարաբերությունները

Հուզական շփման պահանջմունքը դպրոցականների կողմից բավարարվում է մեծահասակների, հասակակիցների հետ հարաբերությունների ոլորտներում, ավելի հազվադեպ՝ ավելի մեծ կամ փոքր երեխաների հետ: Կրտսեր դպրոցական տարիքի սովորողները մեծահասակների հետ շփվում են հիմնականում ընտանիքում (ծնողների, հարազատների հետ) և դպրոցում (դասվարի հետ): Այս տարիքի երեխաների մոտ մեծահասակների հետ շփման ինտենսիվությունը տատանվում է՝ կախված կենսագործունեության բովանդակությունից և ձևերից, երեխաների հետ մեծահասակների հաղորդակցման ոճից և մեծահասակների նախաձեռնությունից: Կրտսեր դպրոցական տարիքում, ի տարբերություն հետագա

տարիքի, մեծահասակների հետ շփման բովանդակությունն ընդգրկում է կենսագործունեության բոլոր ոլորտները:

Կարելի է առանձնացնել մեծահասակների հետ կրտսեր դպրոցականների շփման մի քանի դրույթներ [14, 105].

ա. ուսումնական աշխատանքի գործընթացում տանը և դպրոցում,
բ. մեծահասակներին դպրոցում իրենց գործերի և առհասարակ ամեն ինչի մասին տեղեկացնելը,
գ. մեծահասակներից կոնկրետ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն խնդրելը,
դ. խնդրելով մեծահասակներին գնահատել իրենց վարքը և լսել իրենց և իրենց հասակակիցների մասին տեղեկություններ:

Ընտանիքում մեծահասակների հետ շփման բովանդակությունը որոշվում է նաև տվյալ ընտանիքի կենցաղով և դրա անդամների ազատ ժամանակի կազմակերպմամբ: Մեծահասակների հետ հաղորդակցում տեղի է ունենում նաև հասակակիցների կամ ավելի մեծ երեխաների հետ կոնֆլիկտների լուծման իրավիճակներում, որոնց դեպքում մեծահասակներին դիմում են որպես արբիտրներ կամ պաշտպաններ:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցման հմտությունների զարգացումը ուսումնական գործընթացում

Լ. Ս. Վիգոտսկին կարծում էր, որ նախադպրոցականից դպրոցական տարիքի անցման ժամանակ երեխան շատ կտրուկ փոխվում է և կրթության առումով ավելի դժվար է դառնում, քան նախկինում: Սա մի տեսակ անցումային փուլ է. երեխան այլևս նախադպրոցական չէ և դեռ դպրոցական էլ չէ [2, 182]: Կրտսեր դպրոցական տարիքում տեղի է ունենում մարդկանց հետ երեխայի հարաբերությունների վերակառուցում: Ինչպես նշել է Լ. Ս. Վիգոտսկին, երեխայի մշակութային զարգացման պատմությունը կարող է սահմանվել «որպես վարքագծի ավելի բարձր ձևերի սոցիոգենեզ» [4, 432]:

Ըստ Բ. Ս. Մուխինայի՝ «երեխա-մեծահասակ» հարաբերությունների ոլորտում, բացի «երեխա-ծնող» հարաբերություններից, առաջանում են «երեխա-ուսուցիչ» նոր հարաբերություններ, որոնք երեխային բարձրացնում են իր վարքագծին ուղղված հասարակական պահանջների մակարդակի վրա: Միայն ուսուցիչը, ով խստորեն պահանջում է երեխայից՝ գնահատելով նրա վարքը, պայմաններ է ստեղծում երեխայի վարքագծի սոցիալականացման համար [7, 496]: Դպրոցում կրտսեր դպրոցական տարիքում երեխաներն ընդունում են ուսուցչի կողմից իրենց առաջ դրված նոր պայմանները և փորձում խստորեն պահպանել կանոնները [9, 175]:

Ինչպես գրում է Վ. Վ. Դավիդովը, կրտսեր դպրոցական տարիքը երեխայի կյանքում առանձնահատուկ շրջան է: Դպրոցում կառուցվում է հարաբերությունների նոր համակարգ, տարբերակվում է «երեխա-մեծահասակ» հարաբերությունների համակարգը: *Երեխա-մեծահասակ* և *երեխա-երեխա* հարաբերությունների համակարգը սկսում է որոշել երեխայի փոխհարաբերությունները ծնողների, ուսուցիչների և այլ երեխաների հետ: *Երեխա-ուսուցիչ* հարաբերությունն առաջին անգամ դառնում է *երեխա-հասարակություն* հարաբերության հիմք [9, 272]: Ուսուցիչը մարմնավորում է հասարակության պահանջները, դպրոցում գոյություն ունի միևնույն նախատիպերի համակարգը, միևնույն գնահատման միջոցառումները, ինչը որ ընդհանուր առմամբ գոյություն ունի հասարակության մեջ:

Ուսուցիչը երեխայի համար դառնում է մի կերպար, ով որոշում է նրա հոգեբանական վիճակը ոչ միայն դասարանում, դասընկերների հետ շփման մեջ. նրա ազդեցությունը տարածվում է նաև ընտանեկան փոխհարաբերությունների վրա: Դպրոցում կրտսեր դպրոցականի սոցիալական ակտիվությունը դրսևորվում է աշակերտի համար պարտադիր կանոնների պահպանմանն ու կատարմանը ուղղված վարքագծով՝ ձգտելով օգնել իր հասակակից-

ներին պահպանել այդ կանոնները: Երեխայի սոցիալական ակտիվությանը զուգահեռ զարգանում է նաև հոգեկան ակտիվությունը, երբ մեծահասակի ղեկավարությամբ ձևավորվում է երեխայի ինքնագիտակցությունը [11, 235]:

Կրտսեր դպրոցական տարիքը սոցիալական վարքի ուսուցման հարմարավետ շրջանն է, երբ ձևավորվում են տարբեր սեռի երեխաների միջև շփման մշակույթը, հաղորդակցման և խոսքային կարողությունները: Երեխան, դպրոց հաճախելով, առաջին հերթին իր համար բացում է նոր միջավայր սոցիալական տարածության մեջ, ինչպես նաև ձևավորվում են մարդկային նոր հարաբերություններ [18]: Նրա առջև դրվում են պարտականություններ՝ կապված ուսուցման գործունեության հետ: Երեխայի հաղորդակցման կարողությունների ձևավորումը տեղի է ունենում լեզվի միջոցների ակտիվացման շնորհիվ:

Այն երեխաները, ովքեր հոգեբանորեն պատրաստ չեն դպրոցին, որպես կանոն, նրանց մոտ բացակայում են տարիքին համապատասխանող ձևավորված որակները և կարողությունները: Նրանց վարքը բնորոշվում է անկազմակերպվածությամբ, լինում են անկարգապահ ակտիվ, կամ էլ հակառակը՝ անհամեմատ դանդաղաշարժ, ներամփոփ: Այսպիսի երեխաները վատ են գիտակցում շփման վիճակի առանձնահատկությունները և դրա համար էլ շատ հաճախ իրենց դրսևորում են ոչ ադեկվատ:

Այսպիսով՝ դպրոցում երեխայի ուսուցման նախնական շրջանում սկսում են ձևավորվել սոցիալական կարևոր որակներ, որոնք հնարավորություն են տալիս արագացնել սոցիալական ադապտացիայի գործընթացը: Պետք է հիշել, որ կրտսեր դպրոցականների մոտ հնարավոր բոլոր միջամտությունների իրականացման լավագույն ձևը խաղայինն է, քանի որ հենց այս մեթոդն է լավագույնս համապատասխանում տվյալ տարիքային խմբի աշխարհընկալման առանձնահատկություններին: Խաղի ընթացքում երեխայի բնական, անկաշկանդ վարքը արտացոլում է նրա սոցիալական դիրքը, ինչն էլ թույլ է տալիս բացահայտել և կանխատեսել նրա զարգացումը:

Եզրակացություն

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ հաղորդակցման առանձնահատկությունների վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրման արդյունքում եկանք այն եզրակացության, որ հաղորդակցական ունակությունները՝ որպես կրտսեր դպրոցականների անձի որակներ, սահմանվում են որպես գիտակցական կոմունիկատիվ գործողությունների մի համալիր, որը թույլ է տալիս ստեղծագործաբար կիրառել գիտելիքները՝ հասակակիցների և մեծահասակների հետ նպատակաուղղված փոխհարաբերություններ ստեղծելու և դրանք պահպանելու համար: Այս համալիրը իր կառուցվածքում պարունակում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են լսելու ունակությունը, սեփական մտքերը ասելու և պնդելու կարողությունը, կոնֆլիկտային իրավիճակներում ինքն իրեն դրսևորելու, լուծումներ գտնելու կարողությունը և հմտությունը: Դպրոց ընդունվելու հետ երեխայի մոտ սկսվում է հաղորդակցման հմտությունների ակտիվ յուրացման փուլ: Ե՛վ հասակակիցների, և՛ մեծահասակների հետ փոխհարաբերությունների կառուցումից, խմբում երեխայի դիրքից կամ կարգավիճակից է կախված նրա անձի ձևավորումը անձնային հարաբերությունների համակարգում: Այս շրջանը հիմնականում համընկնում է երեխայի անձի զարգացման կրտսեր դպրոցական տարիքի հետ: Այս տարիքում հաղորդակցական հմտությունների ձևավորվածության մակարդակը ազդում է ոչ միայն երեխաների ուսուցման արդյունավետության վրա, այլև նրանց սոցիալիզացիայի և անձի ընդհանուր զարգացվածության վրա:

Ուսումնասիրելով ուսումնական գործունեության սկզբում կրտսեր դպրոցականների մոտ հաղորդակցման հմտությունների ձևավորվածության և զարգացվածության մակարդակը՝ եկանք այն եզրակացության, որ երեխաները, դառնալով առաջին դասարանցի, ունեն

հաղորդակցման դժվարություններ ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների, մասնավորապես ուսուցիչների հետ:

Համեմատելով արական և իգական խմբերում հաղորդակցման հմտությունների ձևավորվածության մակարդակը՝ նկատեցինք, որ նրանց միջև էական տարբերություններ առկա չեն: Այսպիսով, հաստատվեց հետազոտության վարկածը, ըստ որի՝ ուսումնական գործունեության սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականների մոտ նկատվում է հաղորդակցման հմտությունների ցածր զարգացվածություն, ինչն էլ ստեղծում է հատուկ հոգեբանամանկավարժական միջամտության ծրագրի իրականացման անհրաժեշտություն՝ ուղղված նրանց մոտ արդյունավետ հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-240

Գրականություն

1. Бодалев А.А. Психология общения, Москва-Воронеж, 2002, 235 с.
2. Выготский Л.С. Развитие высших психических функций. Москва, 2005, 182 с.
3. Выготский Л.С. Собрание сочинений. Т.4. Детская психология. Москва, 2004, 432 с.
4. Выготский Л.С. Собрание сочинений в 6 томах. Т.4. Детская психология. / Под ред. Д.Б. Эльконина. Москва, 2004, 432 с.
5. Деловая психология: уч. пособие: под ред. А.В. Морозова, Академический проект, Москва, 2005, 1040 с.
6. Лисина М. И. О механизмах смены ведущей деятельности у детей первых 7 лет жизни, Вопросы психологии, № 5, 1998, с. 73-77.
7. Мухина В. С. Детская психология, Учебник для студ. вузов, 4-е изд., стереотип, Моксва, 2005, 496 с.
8. Мухина В.С. Психология дошкольника. Под. ред. Венгера Л.А., Москва, 2005, с. 272.
9. Мухина В.С. Шестилетний ребенок в школе. Москва, 2006, 175 с.
10. Общение и его влияние на развитие психики дошкольников. Под ред. М.И. Лисиной, Москва, 2005, 209 с.
11. Общение и формирование личности школьника. Под ред. Бодалева А.А., Кричевского Р. Л., Москва, 2007, 235 с.
12. Психология и этика делового общения: учебник, под ред. В. Н. Лавриненко, Москва, 2006, 196 с.
13. Психология. Учебник. Под редакцией А. А. Крылова, “Проспект”, Москва, 2005, 474 с.
14. Развитие общения у дошкольников. Характеристика основных форм общения со взрослыми у детей от рождения до семи лет. Под ред. Запорожца А. В., Лисиной М. И., Москва, 2004.
15. Развитие психологии ребенка в общении со взрослыми и сверстниками. Под ред. Репиной Н. Е., Москва, 2005, 105 с.
16. Смирнова Е. О. Проблема общения ребенка и взрослого в работах Л. С. Выгодского М. И. Лисиной, Вопросы психологии, 1996, № 6, с. 76-87.
17. Социальная психология: учебник: под ред. Г. М. Андреевой, Аспект Пресс, Москва, 2003, 290 с.
18. Социальная психология: учебник под ред. А. В. Морозова, Академический проект, Москва, 2008.

Роль коммуникации в процессе развития личности младшего школьника

Ваган Меликсетян

Резюме

Ключевые слова: *общение, коммуникативный барьер, младший школьный возраст, кризис, формирование личности, коммуникативные способности, коммуникативные барьеры, социализация*

В раннем школьном возрасте происходит формирование личности ребенка: здесь главное место занимает генерирование и развитие эффективных коммуникативных навыков у него. От того, насколько легко ребенок сможет общаться и устанавливать контакт с окружающими его людьми, зависят его будущие успехи в учебной и трудовой деятельности. Известно, что у ребенка могут возникнуть трудности в общении, когда он начинает обучение в первом классе. Возникновение трудностей в общении обусловлено фактором формирования общества, особенностями развития личности в определенной социальной среде, социально-психологическим характером общения, механизмами рефлексии и взаимодействия. Коммуникативные способности, как качества личности младших школьников, можно определить как комплекс осознанных коммуникативных действий, позволяющих творчески применять знания для создания и поддержания целенаправленных отношений со сверстниками и взрослыми. Предполагается, что в начальный период учебной деятельности у младших школьников наблюдается низкое развитие коммуникативных навыков, что создает необходимость реализации специальной психолого-педагогической программы воздействия, направленной на формирование эффективных коммуникативных навыков у них.

The Role of Communication in The Personality Development Process of Primary Schoolchildren

Vahan Meliksetyan

Summary

Key words: *communication, communication barrier, primary school age, crisis, personality formation, communication skills, communication barriers, socialization*

At the early school age, the child's personality is formating. Here the development of his/ her effective communication skills plays a huge role. Future success in educational and work activities depends on how easily s/he will be able to communicate and establish contact with the people around. It is known that a child may have communication difficulties when s/he starts going to school. The factors of society creation, features of personality development in a particular social setting, the socio-psychological nature of communication, and the mechanisms of reflection and interaction are all related to the genesis of communication challenges. Primary schoolchildren with strong communication skills possess a sophisticated set of conscious communicative acts that enable them to apply their knowledge creatively in order to build and sustain meaningful relationships with adults and their peers. It is assumed that in the initial period of educational activity, low development of communication skills is observed among primary schoolchildren, which creates the need for the implementation of a special psycho-pedagogical intervention program aimed at developing effective communication skills among them.

Ներկայացվել է 08.10.2023 թ.
Գրախոսվել է 26.10.2023 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.